ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ

MUNICIPALITY OF TALIN

0501 ք. Թալին, Գայի 1
Հեռ.՝ 060 75 77 87
Էլ. հասցե: talinihamaynqapetaran@list.ru

0501 t. Talin
Tel: 060 75 77 87
E-mail: talinihamaynqapetaran@list.ru

№ 056/2034

14 06 2023թ.

«ԱՄԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Խաչիկ Խաչատրյանին
/հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 10

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

Թալինի համայնքապետարանի և «Ամեքս գրուպ» ՍՊ ընկերության միջև 2023 թվականի ապրիլի 28-ին կնքված «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԽԾՁԲ-23/34» ծածկագրով, Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր), 1.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում է՝ սույն պայմանագրով սահմանված կարգով կատարել շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել՝ կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

Թալինի համայնքապետարանի գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, տեխնիկական հսկողության ծառայությունը իրականացվում են ոչ պատշաճ, չպահպանվելով ծառայությունների մատուցման կանոնները: Նման եզրակացություններ են ներկայացրել նաև կապալառու Տրանսունիվերսալ ՓԲԸ-ի և հեղինակային հսկողություն իրականացնող Հաբշին ՍՊԸ-ի ղեկավարությունը:

Պարզվել է նաև, որ ընկերությունը պատվիրատուի և կապալառուի կողմից կատարվող բազմաթիվ դիտողություններին, խախտում է պայմանագրով իր վրա դրված պարտականությունները, չի ներկայանում շին հրապարակ, շինարարության վարման մատյանում գրանցումներ չի կատարում, չի հետևում շինարարության աշխատանքների որակին և տեխնոլոգիական հերթականություններին:

Կատարողի կողմից ծառայությունը չի մատուցում կամ մատուցում է այնպես, որը խոչնդոտում է շինարարական աշխատանքներին, կամ դրա պատճառով ակնհայտ անհնար է դառնում շինարարական աշխատանքների ժամանակին ավարտը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«ԱՄԵՔՍ ԳՐՈՒՊ»** ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները և պայմանագրի 7.11 կետը:*

ՀԱՐԳԱՆՔՈՎ

Թալին համայնքի ղեկավարի ժ/Պ **Ս.Մկրտչյան**